



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 12 » մարտի 2019թ.

N 63-Ա

ք.Ստեփանակերտ

ԼԵՀԱՍՏԱՆԻ «ՊՈԼՖԱՐՄԵՔՍ Ս.Ա., ՋՈՂԵՖՈՎ 9 ՓՈՂՈՑ, 99-300 ԿՈՒՏՆՈ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ԷԼՈՖԵՆԱԼ, ՖԵՆՍԱՊԻՐԻԴ (ՖԵՆՍԱՊԻՐԻԴԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ՕՇԱՐԱԿ, 2ՄԳ/ՄԼ; 150ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՇՇԻԿ» ԴԵՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 14-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 28-ի N 511-Ա հրամանը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Դադարեցնել Լեհաստանի «Պոլֆարմեքս Ս.Ա., Ջոզեֆով 9 փողոց, 99-300 Կուտնո» դեղագործական ընկերության արտադրության «Էլոֆենալ, ֆենսապիրիդ (ֆենսապիրիդի հիդրոքլորիդ), օշարակ, 2մգ/մլ; 150մլ պլաստիկե շշիկ» դեղի շրջանառությունը Արցախի Հանրապետությունում:

2.Դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ անհապաղ դադարեցնել Լեհաստանի «Պոլֆարմեքս Ս.Ա., Ջոզեֆով 9 փողոց, 99-300 Կուտնո» դեղագործական ընկերության արտադրության «Էլոֆենալ, ֆենսապիրիդ (ֆենսապիրիդի հիդրոքլորիդ), օշարակ, 2մգ/մլ; 150մլ պլաստիկե շշիկ» դեղի շրջանառությունը Արցախի Հանրապետությունում:

3.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի խորհրդական Մ.Ազատյանին՝ ապահովել զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

4.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնի վարիչ Մ.Զաքարյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի վարիչ Ն. Բախշյանին:



Ա. ԲԱՂԻՅԱՆ